ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԻՍՏԻ

Քաղաք՝ Իջևան
Ամսաթիվ՝ 15.09.2025թ.
Ժամը՝ 11.00
Վայրը՝ Իջևանի համայնքապետարան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Հրանտ Ներսեսյան, Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Արարատ Պարոնյան / Իջևանի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիլիթ Սարիբեկյան –/ Իջևանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Հայկուհի Մեհրաբյան - «Գանձաքարի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի տնօրեն / հանձնաժողովի անդամ

Լիանա Ծովանյան – Իջևանի համայնքապետարանի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար մասնագետ / հանձնաժողովի անդամ

Տիգրան Հարությունյան - Բերքաբեր բնակավայրի վարչական ղեկավար / հանձնաժողովի անդամ

Արթուր Ամիրյան - Իջևանի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ / հանձնաժողովի անդամ

Արման Ղալթախչյան - Իջևան համայնքի ավագանու անդամ /հանձնաժողովի անդամ

Սեյրան Սարիբեկյան - Սարիգյուղ բնակավայրի վարչական ղեկավար /հանձնաժողովի անդամ

Աննա Օհանյան - Իջևանի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, սոցիալական աջակցության և առողջապահության բաժնի 1-ին կարգի մասնագետ / հանձնաժողովի անդամ

ՕՐԱԿԱՐԳ

Իջևան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում իրազեկման փուլի ավարտի ամփոփում:

Լսեցին.

1. Հանձնաժողովի նախագահ Հրանտ Ներսեսյանին.

- Նա արձանագրեց, որ Իջևան համայնքի ղեկավարի 21.07.2025թ. հաստատած մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման պլան-ժամանակացույցի համաձայն՝ իրազեկման փուլն ավարտվել է:
- Համայնքի բնակավայրերում իրականացվել է հանդիպումների, լսումների, քննարկումների կազմակերպում, մասնակցային բյուջետավորման գործընթացում բնակչության մասնակցության իրավունքի վերաբերյալ տեղեկատվության տարածում, խրախուսում բնակչության ակտիվ ներգրավվածությանը ծրագրի իրականացման փուլերում:

2. Հանձնաժողովի նախագահի տեղակալ Արարատ Պարոնյանին.

Նա ներկայացրեց իրազեկման մեկնարկի և ավարտի ավարտի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն.

- Ծրագրի մեկնարկի և ընթացքի մասին իրազեկման տարածում համայնքապետարանի պաշտոնական կայք էջում և սոցիալական հարթակներում:

Հանձնաժողովը որոշեց.

1. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրազեկման փուլի ամփոփումը գնահատել դրական:

2. Նիստի արձանագրությունը հրապարակել համայնքի պաշտոնական կայքում:

Նիստի ավարտի ժամը՝ 12:00

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հրանտ Ներսեսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լիլիթ Սարիբեկյան